ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

ՀՀ սահմանադրական դատարանը՝ ՀՀ Նախագահի դիմումի ուսումնասիրման արդյունքների հիման վրա լսելով սահմանադրական դատարանի անդամ Ա. Խաչատրյանի հաղորդումը, **ՈՐՈՇԵՑ.**

1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասինե ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2016 թվականի հունվարի 26-ին ստորագրված վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործն ընդունել քննության։

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասինե ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ գործի դատաքննությունն սկսել 2016 թվականի ապրիլի 26-ին, ժամը 15.00-ին։

3. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասինե ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Ա. Խաչատրյանին։

4. «Սահմանադրական դատարանի մասինե ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով։

5. «Սահմանադրական դատարանի մասինե ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասին և 40-րդ հոդվածին համապատասխան՝ սույն գործով ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Հարությունյանից պահանջել տասնօրյա ժամկետում ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնել.

ա/ վարկային համաձայնագրի 9.7, 9.8, 9.12, 9.13, 9.14, 10.9, 12.1. է), ժ), 12.2, 14.2, 14.4, 14.5, 14.9. բ), 16.1 և 16.2-րդ կետերով ստանձնված պարտավորությունների վերաբերյալ առանձին-առանձին իրավական հիմնավորումներ՝ հատկապես անդրադառնալով այն սահմանադրաիրավական հիմքերին, որոնցով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է նման իրավական պարտավորություններ,

բ/ հիմնավորումներ՝ տվյալ վարկային ծրագրի տնտեսական արդյունավետության վերաբերյալ,

գ/ պարզաբանումներ՝ Համաձայնագրի տեքստի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունները հաշվի առնելու առնչությամբ,

դ/ հիմնավորումներ՝ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից վարկի մարման հետ չկապված տարբեր վճարատեսակների ու պատժատեսակների սահմանման վերաբերյալ /մասնավորապես՝ 2.8, 3.4, 4.7, 5.1, 5.3, 7.3 և 8.2-րդ կետեր/,

ե/ պարզաբանումներ՝ Գնումների ուղեցույցի պարտադիր լինելու հանգամանքի վերաբերյալ՝ ներկայացնելով նաև տվյալ ուղեցույցի պաշտոնական թարգմանությամբ հայերեն տեքստը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

5 ապրիլի 2016 թվականի
ՍԴԱՈ-23